ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 20 -ը մարտի 2019թ.
ժամը 11^{30}

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան,
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԾ առաջատար մասնագետ, Ռ. Զաթոյան,

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Ա. Մաղաքյանը:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. «Մարինե 99» ՍՊԸ-ի՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «Մարինե 99» ՍՊԸ-ի ՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Մարինե 99» ՍՊԸ-ի կողմից ներկայացված՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը՝ Հավելված N6-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով պահանջվող փաստաթղթերի ներկայացման դիմում), Հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակից կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր) և տեխնիկական բնութագրերը գնահատել գնանշման հարցման հրավերի պահանջներին համապատասխան:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «Մարինե 99» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունի: Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:

1.2 Հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Մարինե 99» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը գնահատել համապատասխան՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին, վերջինիս հայտարարել ընտրված(հաղթող) մասնակից 2-րդ չափաբաժնում և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Մաղաքյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրի կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)		Ա. Մուրադյան
Գնահատող		Ա. Պապյան
Գնահատող		Ռ. Չաթոյան
Հանձնաժողովի քարտուղար՝		Ա. Մաղաքյան